

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 29/8

18 հուլիսի 2015 թ.

Քննարկվեց «Անալիտիկ» ՍՊԸ 22.06.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 13.06.2015 թ-ի թիվ 6108197 ակտի դեմ:

«Անալիտիկ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

Սույն թվականի հունիսի 13-ին ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ կողմից կազմվել է թիվ 6108197 ակտը, որի համաձայն «Անալիտիկ» ՍՊԸ-ն պետք է տուգանք վճարի 750.000 դրամի չափով:

Ակտի կազմման համար հիմք է ընդունվել Վարդուհի Երանոսյանի, Հասմիկ Մովսիսյանի, Սեդա Հերզնյանի, Ռիմա Մովսիսյանի և Աստղիկ Վարդանյանի հայտարարությունները ու բացատրությունները, որոնք իրականությանը չեն համապատասխանում:

Ընկերության կողմից Արաբկիրի ՀՏ ներկայացվել է առարկություն, որում մանրամասն նշվել է վերը նշված մարդկանց կապը «Անալիտիկ» ՍՊԸ-ի և նրա տնօրենի հետ:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրում է վերանայել ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 13.06.2015 թ-ի թիվ 6108197 ակտը, քանզի վերը թվարկված մարդիկ «Անալիտիկ» ՍՊԸ-ում երբևէ չեն աշխատել:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 13.05.2014 թ-ի թիվ 6108197 հանձնարարագրի համաձայն «Անալիտիկ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 13.06.2015 թ-ի թիվ 6108197 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով եկամտային հարկի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել 750.000 դրամ:

Սույն գործին առնչվող նյութերի և ապացույցների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ Ակտը կազմվել է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ հետևյալ պատճառաբանությամբ:

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Ստուգման ժամկետը չպետք է գերազանցի ստուգում իրականացնելու մասին համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) հրամանում կամ հանձնարարագրում նշված

ժամկետը: Անհրաժեշտության դեպքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի գրավոր հիմնավորմամբ՝ համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) հրամանով կամ հանձնարարագրով, սույն հոդվածի 1-ին կետով սահմանված ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 10 անընդմեջ աշխատանքային օր, իսկ ստուգվող ժամանակաշրջանի որևէ ֆինանսական տարվա արդյունքով 3,0 մլրդ դրամ և ավելի իրացման շրջանառության կամ համախառն եկամուտ հայտարարագրած տնտեսավարող սուբյեկտների մոտ մինչև 75 անընդմեջ աշխատանքային օր:»:

Քննարկվող դեպքում ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 13.05.2014 թ-ի թիվ 6108197 հանձնարարագրով ստուգման ժամկետը սահմանվել է մինչև 10 անընդմեջ աշխատանքային օր:

Հանձնաժողովն արձանագրեց այն փաստը, որ թե՛ ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 05.06.2015 թ-ի թիվ 6108197 ակտի նախագծի, թե՛ Ակտի վրա կատարված գրառումների համաձայն ստուգումը կատարվել է 22.05.2015 թ-ից մինչև 05.06.2015 թ-ն ընկած ժամանակահատվածում: Ընդ որում, առկա չէ որևէ ապացույց՝ հրաման կամ հանձնարարագիր, ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 13.05.2014 թ-ի թիվ 6108197 հանձնարարագրով սահմանված ստուգման ժամկետը երկարաձգված լինելու վերաբերյալ:

Այսինքն, ստուգման ժամկետը տևել է ոչ թե վերոգրյալ հանձնարարագրով սահմանված 10 անընդմեջ աշխատանքային օր, այլ՝ 11 աշխատանքային օր:

Վերոգրյալից հետևում է, որ քննարկվող դեպքում Ակտը կազմվել է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտմամբ:

Հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի, անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:



Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ Ակտը «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտմամբ կազմված լինելու հանգամանքը վկայում է Ակտը օրենքի խախտմամբ ընդունված լինելու մասին, ինչը հիմք է հանդիսանում այն չեղյալ համարելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 13.06.2015 թ-ի թիվ 6108197 ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ